

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին	
№	0683
02 MAR 2022	
Կից	<input type="checkbox"/> Նշում

« 01 » մարտ 2022 թ. No 841 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի ԹԻՎ 2839-Ա, 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի
ԹԻՎ 4794-Ա, 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 5059-Ա ԵՎ 2022
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 02-Ի ԹԻՎ 422-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ
հոդվածները՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի
Հանրապետությունում դեղերի գրանցման մասին» թիվ 2839-Ա. հրամանի հավելվածի
«Վիտամին Դ3 Կոկա դեղահատեր 1000 ՄՄ (ԳՀ 19976) «Դեղի արտադրական
գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները» կետի «ԿՌԿԱ Դ.Դ., Նովո մեստո,
Սնարժեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո, Սլովենիա» բառերը փոխարինել «ԿՌԿԱ դ.դ.,
Նովո Մեստո, Սնարժեսկա փ.6, 8501 Նովո Մեստո-փաթեթավորող, որակի և բաց
թողնման հսկող, ԿՌԿԱ դ.դ. Նովո Մեստո, Ռադա Պուսենյակա փ. 10, 9240 Լյուտոմեր,
Սլովենիա-բալք արտադրող» բառերով:

2. Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 07-ի «Հայաստանի
Հանրապետությունում դեղերի հետգրանցումային փոփոխությունների հաստատման
մասին» թիվ 4794-Ա հրամանի հավելվածի «Տեմոդալ 250 մգ դեղապատիճներ (ԳՀ
18302/2/2)» դեղի «Եզրակացության համար» կետի «18301/2/2» բառը փոխարինել
«18302/2/2» բառով:

3. Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի
Հանրապետությունում դեղերի գրանցման մասին» թիվ 5059-Ա հրամանի հավելվածի

Տեսվ. 02.03.2022 Տ. 09⁴⁰ թ.

«Ֆոսֆոգլիվ ՈՒՐՍՈ դեղապատիճներ (ԳՀ 20358)» դեղի «արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները» և «Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը» կետերի «Ֆարմստանդարտ-Լեկսրեդստվա ԲԲԸ, 305022, Կուրսկ, Ագրեգատնայա 2-րդ փ., 1ա/18» բառերը փոխարինել «Ֆարմստանդարտ-Լեկսրեդստվա ԲԲԸ, 305022, Կուրսկի շրջան, ք. Կուրսկ, Ագրեգատնայա 2-րդ փ., 1ա/18» բառերով:

4. Առողջապահության նախարարի 2022 թվականի փետրվարի 02-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» թիվ 422-Ա հրամանի 5-րդ կետը, այն է «Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:» բառերը փոխարինել «Դեղի գրանցման ժամկետի հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ռեֆերենտ երկրում գրանցման ժամկետի ավարտը՝ 08.08.2024:» բառերով:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

28.02.2022

X 

ԱՆԱՅԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157